	<p>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</p>	<p>10RB/11CB RL 72-01-06</p>	<p>Էջ 1/3</p>
<p><b>ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b></p>		<p>Խմբ.1</p>	
		<p>Ուժի մեջ է 05.10.2016թ.-ից</p>	

1. Ուղղորդման ծրագրին կարող է մասնակցել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
2. Ուղղորդման ծրագրին մասնակցելու համար ուղղորդողը պետք է Բանկին տրամադրի իր, ուղղորդվող անձի, ուղղորդվող ծառայության (այսուհետ՝ ծառայության) տվյալները և ստանա չկրկնվող ուղղորդման կողմ<sup>1</sup> Ամերիաբանկի (այսուհետ՝ Բանկ) վեբ կայքում ուղղորդման հայտը լրացնելու միջոցով: Չկրկնվող ուղղորդման կողմ անհրաժեշտ է տրամադրել ուղղորդվող անձին, որպեսզի վերջինս ծառայությունը ստանալիս/օգտվելիս տրամադրի ուղղորդման կողմ Բանկին: Ուղղորդվող անձը ստորև նշված ծառայություններից օգտվելիս պետք է պարտադիր նշի, որ ինքը օգտվում է Բանկի ծառայություններից ուղղորդման ծրագրի շրջանակում, ի հավաստում որի՝ նա պետք է Բանկին ներկայացնի ուղղորդման կողմ:
3. Բանկ կարող են ուղղորդվել հետևյալ ծառայությունները՝
  - Հաշվի բացում և գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ բանկինգից օգտվող նոր հաճախորդ
  - Նոր քարտ
  - Նոր վարկ կամ վարկային գիծ
4. Ուղղորդող անձին պարզևատրում տրամադրվում է միայն հաջողված ուղղորդումների համար: Ուղղորդումը համարվում է հաջողված, եթե՝
  - ուղղորդվող անձին ծառայությունը փաստացի տրամադրվում է

<sup>1</sup> Բացառությամբ ծրագրի գործընկերների կողմից ստացված ուղղորդումների, որոնց դեպքում կարող են սահմանվել ուղղորդումների ստացման այլ մեխանիզմներ:


## ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբ.1

Ուժի մեջ է 05.10.2016թ.-ից

- ծառայության տրամադրման պահին ուղղորդվող անձը ներկայացնում է տվյալ ուղղորդմանը համապատասխանող չկրկնվող ուղղորդման կողմ Բանկի աշխատակցին
  - ծառայության տրամադրման պահին չկրկնվող ուղղորդման կողմի վաղեմության ժամկետը լրացած չէ
5. Ուղղորդման կողմ ուժի մեջ է ուղղորդման կողմի գեներացման պահին հաջորդող երեք ամիսների ընթացքում:
  6. Ուղղորդող անձի պարզևատրումները վճարվում են Բանկի կայքում ուղղորդման հայտում ուղղորդող անձի կողմից նշված դրամային քանակային հաշվին:
  7. Ուղղորդող անձի՝ տվյալ ամսում տրամադրված ծառայությունների դիմաց պարզևատրումները վճարվում են ամսական պարբերականությամբ՝ ելնելով հաջողված ուղղորդումների տեսակից և քանակից:
  8. Պարզևատրումները վճարվում են համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

Ծառայություն		Ուղղորդման պարզևավճար /ՀՀ դրամ/ (մինչ հարկումը)
<b>Նոր քարտ</b>	Ստանդարտ դասի (ՄրՔա, Cirrus Maestro, Visa Electron, Visa Classic, MasterCard Standard)	1,000
	Բարձր դասի (MC/Visa Gold, MC/Visa Platinum, Visa Infinite, MC/Visa Business)	6,000
<b>Նոր տրամադրվող վարկ կամ վարկային գիծ</b>	մինչև 2 մլն. ՀՀ դրամ	Չի տրամադրվում
	2-ից մինչև 20 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	10,000
	20-ից մինչև 50 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	25,000
	50 մլն. ՀՀ դրամից ավելի կամ համարժեք	50,000

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB/11CB RL 72-01-06	էջ 3/3
<b>ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b>		Խմբ.1	
		Ուժի մեջ է 05.10.2016թ.-ից	
	արտարժույթ		
	<i>Գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկ համակարգից օգտվող նոր հաճախորդ</i>	2,000	

9. Պարզևատրվող գումարները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ֆիզիկական անձնաց դեպքում) և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթների համաձայն: Հաջողված ուղղորդումների դիմաց պարզևատրումը վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ուղղորդող անձի հարկային գործակալ և գանձում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով /ֆիզիկական անձանց դեպքում/ և/կամ ՀՀ այլ օրենսդրական դրույթներով սահմանված չափով գումարը և փոխանցում պետական բյուջե:
10. Ուղղորդվող անձին կարող է տրամադրվել 50% զեղչով գործարքներ կատարելու իրավունքով ինտերնետ-բանկինգ համակարգ կամ առաջին տարին անվճար սպասարկմամբ AYO Classic քարտ<sup>2</sup>՝ ըստ հաճախորդի նախընտրության:

<sup>2</sup> Համապատասխան քարտատեսակի կիրառումից հետո: